# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**12 օգոստոսի 2022 թվականի N 318Ա**

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով և 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1150-Ա որոշումը՝

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի, Կապան համայնքի, Սյունիք գյուղի 1-ին փողոց N 15 հասցեում գտնվող՝ 12486540,0 դրամ հաշվեկշռային արժեքով (շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը՝ 39485641,2 դրամ), 778,4 քառ. մետր մակերեսով հիվանդանոցի շենքը և 165,3 քառ. մետր ընդհանուր մակերեսով շինություններն ու դրանց սպասարկման համար առանձնացված 0.47726 հեկտար հողամասը (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ N12052022-09-0041) Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը հանձնելու նպատակով ստեղծել անշարժ գույքի հանձնման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի N 1150-Ա որոշմամբ սահմանված ժամկետում ապահովել նախատեսված գույքի հանձնման աշխատանքների իրականացումը:

12.08.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 9712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. օգոստոսի 12
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2022 թվականի
դեկտեմբերի 12-ի N 318 Ա որոշման

**Կազմ**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂԻ**

| | | |
|---|---|---|
| Էդգար Մարտիրոսյան | - | Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար (հանձնաժողովի նախագահ) |
| Սոս Թումանյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ |
| Թամար Ստեփանյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Մուշեղ Կոստանդյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի – մարզային հողային պետական տեսչության պետ |
| Արմեն Թադևոսյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ |

8/12/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

**ՀՀ Սյունիքի մարզպետարանի**
**գլխավոր քարտուղար** **Է. Մարտիրոսյան**